

ՊԻԻՐԿՐԱՎՆԵՐ

— 558 —

(Նախընթացմ տես հտ. ԿԲ. էջ 561)

ԱԶԴ. — Կոմիտաս Պէյ Մինասեանի աշխարհաբարին իբրեւ նմոյշ մը՝ Պիւլը-կրավմեքու ամբողջական ազատ թարգմանութենէն մաս մը հրատարակուածը (1901, էջ 585, 561), քանի մը յարգելի գրականներու ինդիկ-քին համաձայնելով՝ պիտի շարունակենք Հանդիսիս էջերուն մէջ:

ՏԵՍԻԼ ԵՕԹՆԵՐՈՐԿ

Նոյն անձինք. Մուրացկանն. — Մուրացկանին խօսելով:

Յոփ. — Ո՛վ անանուն օտարական, ո՞վ ծերունի, հիւր յարկիս
 Որ քու տունդ է, ուր աղունաց պիտի ուտես և պառկիս,
 Միթէ գիտե՞ս թէ Տաւնոսի վայրի լեռանց մէջ կանգուն,
 Բարձանց վերայ բարձրէն նայող քարէ պահակ միշտ անքուն,
 Ըսպառնական հըզօր դրացի կայսերական նիստերու՝
 Որ Գոլունի մերձակայ է և իսփիրէ ոչ հեռու,
 Հրաբլիական խրտապարէ ձուլած տարի մը վերայ՝
 Հրոյակաւոր բերդերուն մէջ գերահռչակ բերդ մը կայ:
 Ամենամուր և անառիկ բերդ լեռնակալ իշխանի
 Որ մեծ կոմս է, կոմսերուն մէջ գեր ի վերոյ անուանի.
 Միթէ գիտե՞ս թէ այն իշխանն, օրինազանց, պատժապարտ,
 Միանգամայն վատահամբաւ և փառաւոր մենամարտ,
 Կայսերական վրճով մահու դատապարտուած յանցաւոր,
 Եկեղեցւոյ ծոցէն վանուած դժոխսապարտ մեղաւոր,
 Այր բազմակոծ և շանթահար զոր շատ փորձեց բախտ դաժան.
 Սակայն ժայռին վերայ հաստատ և դիտման մէջ անսասան,
 Ամենայնի կը դիմանայ, և թէ կարի ահագին,
 Խըրտուիկ դըքսաց՝ թագաւորաց և կայսերաց դասակին,
 Միշտ թըշնամի դրացւոյ մը հետ մարտընչելով շարաշար,
 Այն թըշնամւոյն, որ և ըլլայ, պաղատինեան նախարար,
 Եկեղեցւոյ աւագ իշխան, աշխարհական, քահանայ,
 Աչ իսկ բերդին մէջ կը ներէ որ անխըռով քնանայ.
 Թէ այս վաթսուն տարի է՝ որ ընդդիմակաց բաւական,
 Պատին վերայ արձանացած արթուն դիտակ պահական,
 Այն քաջըն որ բանակի հետ մենամարտող զինուոր է՝
 Կայսրըներուն կանգնած սանդուղն ոտով ի վայր կը զլորէ:
 Միթէ գիտե՞ս թէ այն իշխանն, արի արանց ազատասան,
 Կըրնայ ազատն ընել գերի, հարուստն աղքատ մուրացկան.
 Թէ՛ բազմավիշտ Գերմանիոյ որդի կարի ցաւագին,
 Ամբլիթար ականատես աղիողորմ միհակին,
 Անի՛ բերդին վերայ տընկած՝ դրօշ մի՛ունի որ սեւ է,
 Դըրօշ մը՝ որ կանգուն որչափ որ ճգնաժամըն տեսէ՝
 Ունայն լաթի հատոր մը չէ, քառից հողմոց խաղալիք.
 Այլ սրգանշան և անողորմ դահիճներուն սպառնալիք:
 Միթէ գիտե՞ս թէ նահապետ, երկարակեաց, ծերունի,
 Անի այսօր իւր հաստատուն թիկանց վերայ դար մի՛ունի.

Էւ թէ՛ անխոնջ, որպէս անկոր՝ խըստանալով կը կըրէ Այն բեռնն որ օր ըստ օր եւս աւելի ծանրը է. թէ՛ այն օրէն ի վեր ուր վէճ արծույ մը պէս տիրաբար ծալալին վըրայ նախ թառեցաւ, ոչ մարդ անհայտ՝ անդադար, Ար լերանց մէջ բերդ չըթողուց, ի սպառ քանդեց մի առ մի, Էւ ոչ կեսար, ցասեալ կեսար, հին դիւերիմ թրշնամի, Ոչ Պապն անգամ սուրբ շանթերովն, ոչ ծերութիւն՝ այն մեծ բեռն Ոչ որ նուաճեց և խոնարհեց, նաեւ ոչ ինչ ընկճեց դեռ, Այն ծերունին որ ճըշմարտիւ հին Տիտանանց կը նմանի, Նըզովեալ Բոփ անուամբ ծանօթ և ընդհանուրս անուանի, Գիտես:


Մտրաց. — Գիտես:

Յոփ. — Այն շանթահարն որ տակաւին կանգուն է, Այն նըզովեալ ծերունին տես, անի ըզքեզ կ'ողջունէ: Անա՛ որդիս, Մագնոս, նեցուկ ծերիս և տանըս պատիւ. Քաջ մ'է, սակայն իմ հասակիս կէսին հասած է հազիւ, Անա՛ իմ թոռս և թոռնորդիս զոր կը գիտեմ թախծագին, Երկու գաճաճ որ չը հասան ոչ իսկ որդւոյս հասակին. Անակընկալ պատրանք յուսոյ, որ կը լուծէ ապագան, Ո՛վ ծերունի, լըսէ, ես սուր մ'ունիմ, աւանդ հայրական, Անուն մ'ունիմ, զոր ըստացայ սըրոգս, անուն ահաւոր, Ամրոց մ'ունիմ, այն մայրական կալուած, ամրոց զօրաւոր. Սուր, անուն, բերդ, ինչ որ ունիմ, քուկդ է. արդ դու, այցելու, Ըսէ արձակ և բարձրածայն ինչ որ ունիս ըսելու:

Մտրաց. — Իշխանք, և դուք, ո՞վ զօրականք, և դուք որ լուծ կը կըրէք, Ո՛վ զօրնաւորք, ողջոյն ձեզ, արդ խրատող ծերիս ուշ զըրէք: Թէ որ հոգւով անարատ էք, թէ որ հանգիստ էք սըրտով, Թէ որ կըրնաք անցեալն յիշել և կալ մընալ անվըրդով, Աւրախացէք. իսկ եթէ ոչ, դուք, փոխանակ խընդալու՝ Զըղշալու էք. Աստուած մը կայ, Աստուած արդար վրիժառու:

Փոխանակաւ երիտասարդներուն և ծերերուն խօսելով.

Ո՛վ դուք, դեռ եւս անփորձ տըղաք. դուք, բազմափորձ ծերունիք, Որ ծողկազարդ՝ ոսկեգոյն վարս, որ ձիւնափայլ մազ ունիք, Դուք որ կարծէք թէ եղանակ զարնան երկայն կը տեւէ, Դուք որ արդէն փորձով գիտէք թէ ժամանակ սրաթեւ է, Դուք որ շատ կարճ անցեալ ունիք, դուք որ շատ կարճ ապագայ. Դուք յիշեցէ՛ք թէ ծերութիւն, դուք յիշեցէ՛ք թէ մահ կայ, Էւ յիշելով ըզգաստացէ՛ք: Ո՛վ ծերունիք, ո՞վ տըղաք, Որշափ և բարձր աստիճանով, որշափ հըզօր և ըլլաք, Միշտ հիւրընկալ եղի՛ք. ամէն թափառական աղքատի Զեր դուռնն թող միշտ բաց ըլլայ. ոչ վանի, ոչ նախատի Այն այցելուն՝ զոր ընդունիլ և մեծարել արժան է. Անի ո՞վ է զոր մեծատունն, այր խըստասիրտ, կը վանէ, Ուսկի՞ք կու գայ այն հիւրն անկոչ, այն մուրացկանն անանուն, Միթէ գիտէ՛: Ամենայնի կարող արդար վրիժառուն Որ լոկ չընշով, — այլ այս ժամուս նընշող մըրբիկ պատժական — Կը կործանէ հարիւրամեայ կաղնին դեռ եւս անսասան, Երբեք երբեք պատժող գործին անարգ նիւթէ կը շինէ, Էւ անկարող մուրացկանի աջըն շանթով կը գինէ, Շանթով՝ դեռ եւս աներեւոյթ՝ որ գուցէ թէ առժամայն Այն ձեռին մէջ խըլըրտելով կը մըռննչէ ցածածայն:



ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Մուրացկանն

Տեսարանն՝ ամրոցին զինազարդ սրահն կը ներկայացընէ, տեսարանին աջ կողմն, որ հանգիստտեսին ձախն է, դուռն մը. և յետնակողմն՝ ուսկից երկինք կ'երևին, ժայռաւոր քարէ վանդակ ունեցող կամարաւոր շէնքի մը. երկաթակընեայ զինազարդ պատեր, և մյլթերուն կրթնած սպառզնն մարդապատկերներ:

Մուրացկանն, որ մտացի զբաղած և թախծազին կ'երևի, ցուպի ձեռքն և զլիսակոր, տեսարանին առաջակողմն արձանացած կեցած է, միայնակ է:

Տ Ե Ս Ի Լ Ա Ռ Ա Ջ Ի Ն

Մուրացկանն

Մուրաց. — յամ է, ժամ է երեւելու, աներևոյթ մենակեաց, երկայնամիտ ականատես Գերմանիոյ ժառն չարեաց. Այո, ժամ է, անպաշտպանի աստուածառաք հոգածու, Օրհասական կիսամահին՝ Գերմանիոյ հոգալու, եւ վերջին դեղ մը փորձելով՝ անակընկալ, ահագին, Նոր կենք տալու այն ըսպառած մարմնոյն, շրնչող դիակին: Այն դեղն զոր պիտի փորձես, որ փրկելու կարող է, Անվճարանգ չէ, գիտես, վայ քեզ, թէ որ Աստուած չաշողէ, Քեզ որ առանց նըպաստի ես, առանց զինու զորահիշ. Այսու հանգերձ թող պատահի ինչ որ պիտի պատահի, Փորձելու ես, որովհետեւ յաշողելու յոյս մը կայ: Ո՛վ հայրենիք, որու համար իմ հոգիս միշտ կը սըզայ, Ո՛վ մայր, որչափ հիւանդ ես դու, աւաղ, որչափ բազմացաւ եւ բազմավեր, որչափ ժանտ է այն ախտն որ հընացաւ, Ախտն որով դու կը մաշիս, ո՛վ անդարման ախտահար: Ո՛րչափ հարուած տեսայ, որչափ անակընկալ պատահար. Թըշուառական որ տանըդ մէջ կը դողաս՝ ոչ ապահով, Ահ ինչ անբուն որդիք ունիս, ո՛վ մայր. թունով՝ դանակով ինչ վատութիւն չըգործեցին. ինչ գործ, անլուր և զագիր, Անառականն որ օր մը զքեզ, առիծասիրտ խաչակիր եւ Քրիստոսի ասպետ, ըզքեզ, ո՛վ Անզդիոյ թագաւոր, Ո՛վ Հրիգարդոս, նոր Աթիլէս՝ ոչ ինչ նըւազ փառաւոր, Որ մեր պատուոյն հաւատացիր, վաճառեցին. ինչ ամօթ: Ո՛վ կերպարանք Գերմանիոյ՝ նորանըլան, անծանօթ եւ ալյանդակ, թուլցաւ, լուծաւ զաւառական կապն ամուր. Ահ, զօրութիւն կըրնայ մընալ ուր միութիւն չըկայ, ուր Ահ ինչ զաւառ, ամէն քաղաք ինքնիշխան է: Ո՛վ զարմանք. Գերմանացի չըկայ. հարցո՛ւ. սա Ազգոն է և սա Ֆրանք, Սա Ֆրաման է և սա Ղորէն, սա Մորաւ եւ սա Պաւար, Գերմանացի տեսնել կ'ուզես եւ կը խընդրես վայրապար, Գերմանիոյ սահմանին մէջ Գերմանացի չըմընաց, Ահ՝ որ անթիւ բազմութիւն էր՝ անհետացաւ. ո՛ր զընաց, Աստուած գիտէ, հայրենասէր մարդու որչափ դառն ցաւ: Ինչ ժամանակ. քաղաքական պարտն իրաւ շատ դիւրընցաւ: Զոր մըրցելով նոր համազգիք կատարելու կը ջանան. Երբ արեղան իւր շարականն երգեց և երբ քահանան Աղօթելով պատարագեց և օրհնութիւն պարգեւեց, Երբ մանկուսիկն իշխանին հետ զընաց և տէգըն կըրեց, Երբ այն իշխանն ասպատակեց, անպատուհաս որսական, եւ արձնատան մէջ մըթերեց կահ և արծաթ բաւական, Երբ թագաւորն անհոգ քնացաւ, — թող անուշ քուն վայելէ — Ինչ որ պարտ էր մեզ կատարել կատարեցաւ ըսել է:

Այս անաշխատ աւագակաց օրն է, աւանդ, շատ չար օր։
Անոնց համար կը վատտակին թէ՛ հողագործ թէ՛ արօր։
Աւարառուն անխելայ է, արդ չաւարողն ինչ կ'ընէ։
Ահանատես վարանամիտ, եթէ ոչ թոյլ ի բռնէ,
Թըշուառութեանց պաղ կարեկից, ամրոցին մէջ ապահով,
Այսու հանդերձ սնապաշտ, մասունք կը համբուրէ զդատով
Եւ կ'աղօթէ, ըսպատելով աստուածային հրաշխի։
Եւ նոյնժամայն Գերմանիա, մայրն անդարման, կը մաշի։
Պագատինեան մեծ նախարարն, որ կայսրընտիր իշխան է,
Առանց բռնաւ ամաչելու՝ քրէն ծախու կը հանէ,
Կը վաճառէ կայսերական պըսակն, աւանդ փառաւոր,
Արաւ մը, այր օտարական, Պոնեմիոյ թագաւոր,
Կայսրընտիր է։ Աւանդ, աւանդ, ինչպէս հոգիս չըսըզայ։
Տէրունական զինադադարն այլ եւս յարգող մը չըկայ։
Գերմանիա զագաններու կըրկէս մ'է։ մարտ անբնական,
Մարտ համագգեաց, և սով, ժանտախտ ոչ ինչ նըւազ տեսական,
Ազգս անխելայ կը օտառակն, վայ անպաշտպան տըկարին։
Աղբիւրք կենաց, որպէս հասից, օր ըստ օրէ կը սպառին։
Այն մարտըն երբ պիտի դադրի. երբ մարդ պիտի չըմընայ
Որ մարտընչի. Գերմանիա, ոտնակոխեալն անխելայ,
Անպատ մ'է, ուր ապահով վայր չըկայ. ո՞վ կը բնակի։
Այն խոփըն որ հող կը հերկէր եղաւ սըլաք նիզակի,
Անգործ մանգաղն որան թողուց և զընաց մարդ հընձելու։
Ա՛հ ըսփոփիչ տեսիլ չը կայ, աչիս ոչ մօտ ոչ հեռու։
Տարածական հարուած, հըրդեհն ամենուրեք կը տիրէ,
Եւ հորիզոնն, ուր որ նայիս, միօրինակ կարմիր է։
Ամէն զընչուն որ երգելով կ'անցնի, աղքատ անվընաս,
Այր հըրձիգ է, անոր վըրան որոնելու որ ըլլատ,
Պիտի զըտես, գրապանի մէջ պահած, կայծքար և հրահան։
Շըրշապատող թըշնամեաց դէմ՝ որ կարի յոյժ զօրացան՝
Կիմանալու կարողութիւն չունինք, ամէն կողմանէ
Արշաւելով կու գան, ահ, ո՞վ ըզմեզ պիտի պաշտպանէ։
Հերկայն ծանտ է, և ապագան, աւանդ, ինչպիսի սոսկալի։
Պէրլին անդարձ կորսուցեալ, եղաւ քաղաք վանդալի,
Վայրի Մոնգոլն անընդդիմակ եկաւ՝ տիրեց Պրէսլաւին,
Անհաւատի լուծ կը կըրէ Տանձիկ, և մենք տակաւին
Կը համբերե՛նք. տունըն կ'այրի և մենք անփոյթ կը քնանանք,
Կամ իրարու հետ կը կըռուինք, աղէտալի՛ հանգամանք։
Այսու հանդերձ արծաթ չըկայ և պիտոյից թիւն իրաւ։
Անհամար է. տընտնկացած Գերմանիան ուր իջաւ։
Հրէից՝ վաշխով հարըստացած Հրէից՝ կարօտ է այսօր,
Անարգ Հրէան կը մեծարէ. հարուստ ուստի բազմագօր։
Քանի՞ քանի՞ մեծ քաղաքի նախամեծար դըռակիր,
Անի միայն որ հայրենիք չունի, անի, այր գազիր,
Ահանատես որու համար մեր ըմբշամարտըն խաղ է,
Յիմարն եղբարց ժանտ բախմանէն անվրէպ օգուտ կը քաղէ։
Արծաթ չըկայ. արդ ինչ կըրնանք ընել առանց արծաթի։
Այն յորդելով նախ կը հոսէր և արդ հազիւ կը կաթի։
Ուստի, Սթրասպուր, չըքնաղ քաղաք, ինչո՞ւ յուսատ վայրապար,
Ջանգակատունդ անկատար է, պիտի մընայ անկատար։
Արծաթն ուր է այն անկատարն աւարտելու համար, ուր։
Գերմանիա, որ նախ պատուար ունէր բազում և ամուր,
Մէն մէն քաղաք ըսպառազէն, ձախող աւուրց ապաստան,
Պատուար չունի. խմպաբաշխն ուր է. ուր է լեհաստան։
Հռենոս բռնաւ անպաշտպան է. ուսկից և գայ, թըշնամին
Կըրնայ արծակ ստպարէս տալ անընդդիմակ ընթացքին։
Գերմանիա սահման չունի արեւմտից կողմանէ։
Միթէ՛ լորէն, որ օտարի բաժին եղաւ, սահման է։
Ժամանակով — այն հընացաւ — ասպետական կարգ մը կար
Զոր Տեւտոնեան կը կոչէինք, որ չըգօր էր. արդ տըկար,
Այն ինչ ունի, քըսան և ութ ասպետ, հարիւր զինակիր։

Ասով գրեալ և թըշնամեաց լէզէոնին դիմացիւր։
Ահ, հոյակապ Գերմանիան Կարողութի՛ Ոթոնի
Քայքայեցաւ, կործանեցաւ, և արդ փոշի է՛ փոշի.
Ո՛վ կը հոգայ. ոչ ոք. սակայն ահա Տանմարք կը սպառնայ,
Պրասպանթ՝ խորուստ որոտալով՝ զըլուին ահա կ'ամբաստնայ,
Եւ հոս գելփեան և գիբելեան, հին ոխերիմ թըշնամիք,
Ահա դարձեալ կը մաքառին. Լորէն, մատնիչ դասալիք,
Դաւ կը նիւթէ. Անգղիացիին, իւր կըզգույն մէջ ապահով
Խաբուռ դէմ կը զըրգըռէ ըզմեզ, խորուստ խընդալով.
Թուրին հըրդեհ մը կ'արծարծէ որ վաղ պիտի տարածի.
Ինչ բազմութիւն ըսպառնական մօտալուռ՝ շար արկածի.
Այսու հանդերձ Փիլիպպոս մ'է Գաղղիացւոց թագաւոր,
Այր փառասէր, հըզօր դրացի, ուստի կարի ահաւոր.
Դեռ արգելումըն չըվերցաւ և Պապըն մեր սըրբազան...
Ռոշէլու համար անշուշտ աստուածային շընորհի,
Որ կ'ուշանայ վերուստ զալու, ըսպասելով՝ կը խորհի
Ահ, այն զըլուի և այն բազուկն ուր է որու պէտք ունիս,
Ով անպաշտպան Գերմանիա, իմ փառաւոր թագուհիս,
Ջոր զահընկէց ըրին. աւաղ, ի զուր յոգւոց կը հանես.
Ի զուր կու լաս, թըշուառական մահապարտին նըման ես
Ջոր անողորմ տանջող մը՝ որ պատառելով կը սպաննէ՝
Իւր չորս ձիուն քարշել կու տայ չորս հակառակ կողմանէ,
Սոյնպէս, ով մայր, չորս կողմանէ չորս կայսր անգուլթ, չորս զազան,
Քարշ ածելով ըզքեզ ի չորս բաժանելու կը ջանան.
Ով երեւոյթ ժանտատեսիլ, ով դժժընդակ ճըզնաժամ...

Կրած ժամ մը գլխակոյր կը կենայ, կը մտմտայ, սպա կաւաց
կաւաց քայելով տեսարանին դէպ ի խորն կը դիմէ (ժրպէրք, որ
սակաւ մ'առուց երիւնցաւ, ձեռնիդիւն կաւարնկերուն տակէն անցնելով
դուրս ելող ժելուէնին պակ մը կը դիտէ՝ քանկարծ պատանւոյն երկուն
որ քազմանոց և տրիտըր էր, կը պայծառանայ, ուրախ զարմացմամբ
փոխակերպած րէձիւնն կը դիտէ՝ որ մուրացկունին դուրս ելած կողմ
էին համդիպակաց կողմէն ներս մտնելով, ուրախ և զուարթ, դէպ ի
խոր կողմն կը դիտէ։

Տ Ե Ս Ի Լ Ե Ր Կ Ր Ո Ր Դ

(Օրպէրք, րէձիւնա

Օրպէրք. — Ի՞նչ կը տեսնեմ, ո՞վ զարմանք, սա՛ րէձիւնա՛ս է, հաւատամ,
խաբէական երեւոյթ չէ՞ որ սիրելոյս կը նմանի.
րէձիւնա. — Ո՛չ, Ոթպէրթ, ոչ, չըսելիալիս. ես եմ, դարձեալ կենդանի.
Օրպէրք. — Դու այսչափ չուտ, այսչափ փոխի՛ս. այս հըրաշ մ'է, հըրաշ.
Որ կիսամահ հիւանդ էիր, ո՞վ դեղ անգին, դեղ ազդու։ (դու
րէձիւնա. — Այն նորոգեց և փոխեց զիս, բոլորովին ուրիշ եմ.
Տես կը քայեմ, կը ծիծաղիմ, կ'ապրիմ, հազիւ կը յիշեմ
թէ՛ կիսամահ հիւանդ մ'էի, նորածին եմ, նորածին.
Այսու հանդերձ միշտ կը սիրեմ ըզքեզ, ցաւերս ո՛ր զացին՝
Չըզիտեմ, բայց անհետացան բընաւ և արդ ուրախ եմ,
Ո՛րչափ ուրախ, եւ մահուանէ, որ խըրտուիլս էր, կը վախեմ.
Օրպէրք. — Ի՞նչ ախտ էր այն՝ ուսկից հըրաշ մ'ըզքեզ փըրկեց։
րէձիւնա. —

Մի՛ յիշեր,
Ահ, յիշատակն անգամ դառն է, լաւ է մոռնալ. Այս գիշեր
Ջերմ չունէի, քնացայ հանգարտ և առանց ցաւ ըզգալու.
Երազելով ըզքեզ տեսայ, ըզքեզ՝ սիրող հոգածու,
Որու շնորհով վայելեցի այն քունն, ահ, այն ի՞նչ քուն էր,
Ո՛րչափ անուշ. ծագող արեւն իմ խուցըս նոր կ'ողջունէր
Երբ այն քընէն ըսթափեցայ, բոլոր բնութիւն կ'արթընար,
Ի՞նչ ըզացի, ճառել իրաւ անհընար է, անհընար.
Արեւըն՝ զոր ըսքանշացած կը դիտէի՝ հինըն չէր,
Եւ այն թըռչնոյ ձայնըն՝ նոր էր որ ականջիս կը հընչէր.

հոր ծագիկներ կը փրթթէին, որ անուշ հոտ բուրելով,
Ականոցիս կը զըզուէին նորատեսիլ գոյներով.
Եւ ես արտառութեամբ կը թափէի և կ'ըսէի. « Ո՛վ արեւ,
Ո՛վ թրուռներ, ո՛վ ծագիկներ, որ կ'ողջունէք զիս, բարե՛ւ »:
Ահ, երջանիկ էի, հոգիս ուրախութեամբ լեցուն էր,
Եւ ապագայ կ'երագէի՝ պայծառ, որ ամպ մը չունէր:
Արդ դու, Օթպերթ, որ ինձ նոր կեանք շնորհեցիր, որ մահէ
Ձիտ պահեցիր, կատարելով գործդ՝ Ոթնէն զիս պահէ:
Օրպէրք. — Պիտի պահեմ, թող սիրելիս չըհոգայ, ինձ վրտահի.
Պիտի պահեմ և կատարեմ իմ գործս ինչ և պատահի.
Վայ Ոթնին թէ որ զըպչի իմ սիրելոյս լոկ մատով.
Ուտի ալլ եւս այս կողմանէ, որպէս մահէ ապահով,
Ո՛վ Բէհինա, կըրնաս վրտահալ աշով դիտել ապագան.
Ասոր համար զիս մի՛ գովեր. ինչ եմ, խոնարհ սիրական.
Այն պատանին զոր կը սիրես, գերբըջանիկ պատանի,
Ամենայնիւ քեզ անարժան և լոկ սիրովն արժանի,
Դիւցազըն չէ, բայց կը սիրէ և մեծապէս կը սիրէ:
Ոթն չար է, անողորմ է, բայց վատ՝ որչափ զագիր է,
Անաւոր չէ: Ուտի դու շերմ չունիս:
Բեհինա. — Եւ ոչ դոյզըն ցաւ.
Աստ ունէի՞, իրաւ մոռցայ, չար երազ մ'էր, լըմընցաւ:
Օրպէրք. — Փառք Աստուծոյ:
Բեհինա. — Եւ փառք քեզ որ բըծիլկըս ես. բայց սակայն
Ես ալլ եւս հոս յամելու չեմ. ծեր նախահայրն առժամայն
Ինձ կը սպասէ:
Օրպէրք. — Պիտի մեկնի՞ս. ահ, ի՞նչափ չուտ:
Բեհինա. — Սիրելիս, մի՛ ուշանար:
Թող զիս. այսպէս տըխուր աշով մի՛ նայիր իմ երեսիս:
Պիտի ջանամ դարձեալ գալու:
Օրպէրք. — Սիրելիս, մի՛ ուշանար:
Բեհինա. — Նայինք, ուտի մընաս բարով:
Ի՞նչինա՝ եկած կողմն յիմնով՝ դուրս կ'իջի.
Օրպէրք. — Ծունկ չքերով եւ քեռերն ի վեր աւքառնալով.
Փառք քեզ, Աստուած կենարար:
Կուսմունմարա՝ տեսարանին յետնակողմէն ներս Վտնիկով կ'երեւի:

Տ Ե Ս Ի Լ Ե Ր Ր Ո Ր Դ

Օրպէրք, Կուսմունմարա.

Կուսմունմ. — Այն Օրպէրքին ուսին վրայ դնելով.
Կարծեմ գոհ ես:
Օրպէրք. — Զարսնորած՝ սրափիկով.
Կուսմունմարա.
(առանձին) ահ, ես ըզքեզ, սատանայ,
Ծոցած էի. ձախող պառաւ:
Կուսմունմ. — Ինչ որ ես քեզ խոստացայ
Կատարեցի:
Օրպէրք. — Կատարեցիր:
Կուսմունմ. — Եւ դո՛ւ, որպէս երդւընցար,
Դու պատրաստ ես...
Օրպէրք. — Այո՛, պատրաստ կատարելու գործը չար՝
Զոր դու ինչ կը պահանջես, զոր երդմամբ քեզ խոստացայ:
Կուսմունմ. — Այն ոճիւր է:
Օրպէրք. — Ինչ և իցէ, թէպէտ կարի աղամայ,
Ան գործըն ես պիտի գործեմ:
Կուսմունմ. — Անվրէ՛պ, առանց թուխալմ.
Օրպէրք. — Այո՛, անվրէ՛պ:
Կուսմունմ. — Ես կացուցի ըզքեզ դահին վրիժառու.
Ուտի պիտի մարդ մ'ըսպաննես:

Օրպէրք. —

Մարդ մը, գիտեմ,
(սաւանճիկ) ապա զիս,

Այլ եւս ապրիլ ինձ հընար չէ:

Կուսանում. — Արդ քաջ ուշ դիր ըսածիս,
Ապա անվրէպ հնազանդելու նայէ՛:

Օրպէրք. — (սաւանճիկ) Աւա՛ղ, խոտոտացայ:

Կուսանում. — Վայրըն գիտես դըրօշաւոր աշտարակին մերձակայ...

Օրպէրք. — Զախող վայր մ'է, ուսկից շատոնք չըլլանդգնին անցնելու.
Այժեպաններ հոն կը շրջին, չունի ուրիշ այցելու.

Քար մը կայ հոն, և աղտ մը այն քարին վըրայ, աղտ կարմիր:

Կուսանում. — Այն արին է, այն աղտըն դու պիտի լրաս. մի՛ գարշիր:

Օրպէրք. — Պիտի լրամ. ի՛նչպէս:

Կուսանում. — Արեամբ. արիւնն արին կը լրայ.

Ոճրոյ նըշան՝ որ այս ժամուս աղտ մ'է քարի մը վըրայ,

Այն լոկ շըրով լրանալու և շընջելու նըշան չէ.

Ամբաստան մ'է, և այս վաթսուն տարի է որ կը կանչէ

« Վըրէ՛ժ, վըրէ՛ժ »: Կարմիր վըկայ, այո՛, լեզու ունի այն

Եւ մեծ ոճիր մը կը պատմէ, զոր մեծ ոճիր մը միայն

Կըրնայ քաւել. ուստի, Օթպէրթ, այն վայրն իրաւ ձախող է:

Երբ կէս գիշեր թանձրը մուծով վայրըն պիտի ըսողէ,

Դու գործակից և մեր դաշին հաւատարիմ ուխտագիր,

Դու անպատեհա՛ն անվրէպ պիտի հոն զըտնըրիս:

Օրպէրք. — Ապա՛. դիր

Թէ հոն գացի:

Կուսանում. — Մարդ մը հոն քեզ պիտի սպասէ:

Օրպէրք. — Քա՛ջ:

Կուսանում. — Անի՛,

Որ դիմակով ըսքողած է, ըզքեզ ո՛ւր տեղ որ տանի,

Դու՛ կոյրի պէս հետեւելով՝ պիտի երթաս: Արդ լաւ է

Որ չըզըրծես. երաշխաւոր մ'ունիս, գիտե՛ս:

Օրպէրք. — Կը բաւէ:

Կուսանումարա Օրպէրքին կրած դանակն ըմբռնելով՝ պաւ տեմէ կը հսկէ. պահ մը զայն ուշադրութեամբ կը քննէ, ապա աւելեւ ամբաստանով՝ երկնից կը նայի:

Կուսանում. — Ո՛վ խորութիւնք անհուն երկնից, անշափելի վիճ վերին,

Ո՛վ անթառամ ըսքանչելիք աստեղազարդ եթերին,

Որ՛ անթթիթիթ աչերու պէս՝ մեզ կը նայիք ի վերոյ,

Ո՛վ փայլ աշօտ, ո՛վ ըսքողած պայծառութիւն գիշերոյ.

Եւ դու՛, ձախող ամրոց և որջ լեռնակալ ժանտ գազանի,

Եւ դու՛ք, կաղնիք, որ կը պարզէք լայնատարած հովանի.

Հա մանաւանդ դու՛, ո՛վ անուր, քսոսրելոյս լուծ դաժան,

Զոր միշտ կրեցի, և դու՛, անարգ շըղթայ, ինէ անբաժան,

Վըկայ եղիք, ահա՛ կ'երդնում. զոհեալս՝ արդար վրիժառու

Եւ պատժարար, պիտի զոհեմ դահիճս՝ առանց զըթալու.

Այս դանակով պիտի մեռնի մի ոճրագործ և մի ծեր

Որ իւր կազնեաց պէս հինաւուրց և քան ըզքեզ, ո՛վ գիշեր,

Սեւ է հոգւով: Պատուհասի ժամըն հասա՛ւ ահաւոր.

Դողմս, Գանութթ, աւազ գազան, անպատուհաս յանցաւոր:

Օրպէրք. — Գանութթ. անի ո՛վ է:

Կուսանում. — Գազան, անձաւի մէջ ապահով,

Արիւնախանձ գազան, անի սըրով սպաննեց, դանակով

Պիտի մեռնի. զոհն է զոր դու պիտի զոհես անխընայ:

Դարձեալ դանակն Օրպէրքին տալով.

Մընա՛ս բարով:

Կուսանումարա՝ տեսարանին խոր դիմելով՝ ձեմեղիքէն դուրս կ'ելլէ. ի նմին ժամուս Գոյի և Բեճինա, զոր Կուսանումարա չտեսաւ, նոյն ձեմեղիքին հանդիպակաց կողմէն ներս կը մտնեն:

Շարայարելի

